

Թ Ի Ի 5

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1914-15 ՇՐՋԱՆԻ
ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԵՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ Ե .

20 Յունիս 1914



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՆՅԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պատկ-Ալի Ճառտեւի, Թիւ. 49

1914

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

1. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան
2. Տ. Վահրամ Սանկունի
3. Տ. Զարմայր քհնյ. Կէդիրեան
- 4.

(Բ. Վիճակ)

5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալագեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բերտաճեան
8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գաղաղեան

(Գ. Վիճակ)

9. Տ. Շմայեակ Արքեպս. Դիմաքեան
10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
11. Անանիա Վ. Շաղարապետեան
12. Տ. Միքայէլ քհնյ. Աշեան

(Դ. Վիճակ)

13. Տ. Արիստակէս Ա. Զհնյ. Զիզմէնեան
14. Տ. Խորէն Ս. Զարուհիւնեան
15. Տ. Յուսիկ Ս. Բաշունի
16. Տ. Տանատ Ս. Փաշայեան

(Ե. Վիճակ)

17. Տ. Եղիշ Ծ. Վ. Պապեան
18. Տ. Շմայեակ Բաճ. Էքէրճեան
19. Տ. Բարթող Ս. Թաղմճեան
20. Տ. Աբէլ Ս. Երէջեան

ԱՇԽԱՏԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Էյուպ Ս. Եղիա

21. Օնիկ Էֆ. Մինասեան

Խասգիւղ

22. Պետրոս Էֆենտի Շալաճեան
23. Պետրոս Ս. Խօրասանճեան
- 24.

Մազրիգիւղ

25. Երուանդ Էֆենտի Պէյաղճեան
26. Թաղուր Ս. Արեւեան
27. Տօքթ. Ս. Մալխասեան
28. Յակոբ Ս. Պոյաճեան
29. Յովհաննէս Ս. Խազուլեան
30. Սարգիս Ս. Պէյրէկեան
- 31.

Պէյիւքտէրէ

32. Արշակ Էֆենտի Ալպոյաճեան
33. Յովսէփ Ս. Գաղաղեան

Սան-Սթէֆանո

34. Գէորգ Էֆ. Ալանեան

(Րթազիւղ)

35. Խա. իկ Էֆենտի Սըվաճեան
36. Տ. Ստեփան Էֆենտի Թէրզեան

(Բ. Վիճակ)

Բերա-Դասը Էփաշա

37. Աստուածատուր Էֆենտի Էփաշեան
38. Արամ Ս. Շալաճեան
39. Արմենակ Ս. Բալսեղեան
40. Գէորգ Ս. Թորգոմեան
41. Գիգոր Ս. Շահլաճեան
42. Յովհաննէս Ս. Զեօկիւնեան
43. Սարգիս Ս. Մինասեան
44. Տր. Վ. Ս. Թորգոմեան
45. Յովսէփ Ս. Գարեան

Գարեալ-Գնալ

- 46.

Գուրուշէշմէ

- 47.

Պէշիկթաշ

48. Տրդատ Պէշ Տատեան

Ֆէրիգիւղ

49. Եղուարդ Էֆենտի Գարակէօղեան
50. Շրանտ Ս. Ասատուր
51. Մարկոս Ս. Նաթանեան
52. Յակոբ Ս. Պահլի

(Գ. Վիճակ)

Գատրգիւղ

53. Անտոն Էֆենտի Թալազ
54. Ալաթի Ս. Ալաթեան
55. Եղուարդ Ս. Բիբիեան
56. Ներսէս Ս. Օհանեան
57. Մկրտիչ Ս. Արզաբեան
58. Պենէ Ս. Թորոսեան
59. Սարգիս Ս. Էսմէրեան

Եֆենտի-Գարու

60. Պենտ Էֆենտի Տէյրմենեան
61. Վահան Ս. Փափաղեան

Պալաթ

62. Տօքթ. Կարապետ Էֆենտի Եղուարդեան
63. Յարութիւն Էֆ. Մոստիքեան
64. Սարգիս Ս. Սրենց
65. Շրանտ Ս. Անդրէասեան

Սկիւտար Եֆենտի-Մահալլէ

66. Թորգոմ Էֆենտի Պոյաճեան
67. Հմայեակ Ս. Խոսրովեան
68. Վահան Ս. Սուրենեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1914—1915 ՆԱՏԱՇՐՋԱՆԻ

ՆԻՍՏ Ե.

20 ՅՈՒՆԻՍ 1914

ՆԱԽԱԳԱՀ. — ՄԱՐԿՈՍԻ ՊԱՏՐԻԱՐԿ ԶԱՅՐ

ԱՏԵՆԱՊԵՏ — ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ԷՖԵՆՏԻ ՊՅՍԱՃԵԱՆ

ՕՐԱՄԱՐԳ

Տեղեկագիր Համապատասխանութեան եւ Դատաւարականութեան Դիւաններու ի մասին Զոհրապ Էֆ. ի ներկայացնումը տալիս է:

(Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ խորհրդարանը ի ներկայութեան 50 ներկայից խառնուրդը որոց թիւը յանգեցաւ յետոյ 66ի):

ԲԱՅԱՆԱՑՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

ԱՏԵՆ. Էֆ. — Ա. Տ. Յակոբեան եւ Յ. Չէօքլի բեան Էֆ.ները անձնական պատճառներով իրենց բացակայութիւնը հաղորդած են, կ'արձանագրենք զիրենք օրինաւոր բացակայ:

Ե. Շիրինեմն Էֆ. — Ճամբորդութեան պատճառաւ եւս ալ պիտի բացակայիմ ժամանակ մը:

Լ. Էֆ. ՍԱՍԹՃԵԱՆ. — Ճամբորդութեան պատճառաւ օրինաւոր պատճառ է, բայց անկէ զուրս ուրիշ պատճառներ օրինաւոր կրնան նկատուիլ: Այս տեղ գտնուողները ամէնքն ալ անձնական զործեր ունին, այդ պատճառաւ բացակայութիւնները եթէ օրինաւոր նկատուին ամէն նիստի միջամտանութիւն չենք ունենար:

ԱՏԵՆ. Էֆ. — Դիւանս այդ զիտողութիւնը ճիշտ կը գտնէ եւ միայն ներքին կանոնադրով որոշեալ բացակայութիւնները օրինաւոր կը համարի:

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՔՆՆԻՉ ԴԻՒԱՆԱՅ

ԱՏԵՆ. ԷՖ. — Դաստիարակութեան դիւանն ալ ատենապետ ընտրած ըլլալով Հմայեակ էֆ. Արամեանցը, կարճանագրենք:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՈՒԹԵՆԷ

ԱՏԵՆ ԷՖ. — Շահրիկեան էֆ. կրկնած է իր հրաժարականը երեսփոխանութենէ: Ժողովիդ ուշադրութեան կը յանձնեմ:

(Ատենապետ էֆ. կարգաց հետեւեալ գիրը):

Ազգային ժողովի Մայր Դիւանին

Շնորհակալ լինելով հանդէձ՝ Ազգային ժողովի կողմից իմ անձին ցոյց տրուած վերաբերմունքին, կարծում եմ որ թիւրիմացութեան արգիւնք է եղած ազգային երեսփոխանութիւնից իմ հրաժարականի մերժման որոշումը, որովհետեւ իմ հրաժարականի պատճառաբանութիւնները զուտ անձնական հայեցողութեան, դաւանանքին պատկանող նկատումներ լինելով՝ չեն կարող ենթակուել ժողովի գնահատմանը, մերժումին կամ ընդունելութեանը: Եթէ ես չոչափում եմ ժողովի տարիների ժամաւաճառութիւնները, օրգանական աշխատանքի անընդունակութիւնն ու խմբակցութեանց անկերպարանաւորութիւնը, ուղղութեան անհետեւողականութիւնը, պատասխանատուութեանց բացակայութիւնը, — դրանք ժողովի կազմի ու բաղադրութեան այնպիսի հարցեր են՝ որոնք չեն կարող հրաժարականի մերժումով լուծուած համարուիլ: Եթէ ես չոչափում եմ երեսփոխանական չրջանի տասն տարուոյ տեւողութեան ժամանակի ոգոյն ու պահանջին անհամապատասխան լինելը, կատարուած ընտրութիւններով եւ գործ դրուած ընտրական մեթոտով ընտրողի եւ ընտրեալի միջեւ անհրաժեշտ յանձնառութեան բացակայութիւնը եւ հետեւաբար սահմանադրականութեան, ժողովրդի կամքին պատ-

գամաւորը լինելու սկզբունքին ու դադարարին խեղաթիւրումը — դրանք անձնական այնպիսի համոզումներ են՝ որոնք ժողովի ընդունած ձեւով, այսինքն հրաժարականի մերժման եղանակով քուէարկութեանը ենթակայ չեն կարող լինել:

Իմ հրաժարականի պատճառաբանութիւնները՝ աւելի բացատրութիւններ են քան պատճառաբանութիւններ: Ի՞նչ այդ բացատրութիւններով դուցէ ես անընդունակ եմ եղած բաւարար չափով պարզելու՝ թէ ես ծառայութեան պարտականութիւնից չէ՛ որ խոյս եմ տալիս, այլ որոշել եմ իմ դաւանանքով հերկայանալ ընտրողներին, որոշ սկզբունքների եւ հարցերի շուրջ ընտրական պայքար մղել ու այդ կերպով ընտրողի եւ ընտրեալի միջեւ պատգամաւորական յանձնառութիւն մտցնել, որով եւ գործնականօրէն տասնից հինգ տարիի վերածել երեսփոխանութեան շրջանը: Այս պայմանների մէջ միայն կայացած ընտրութեամբ — եթէ երբէք ընտրողների հաւանութեան արժանանամ —, ինձ իրաւունք եմ համարում երեսփոխանի հանգամանքը կրել եւ պարտականութիւնը կատարել:

Խորհրդարանական Յանձնախմբի ակնարկուած քննութեան դալով, թէ եւ իմ փորձառական համոզումով չէ մի յոյս չունիմ դրական ընթացք տրուելուն, այնուամենայնիւ, զէջ այդ առիթով սխալուած լինելս տեսնել եւ բաղդը ունենամ, իմ հրաժարականը չի՛ արգելի իմ որ բացատրութիւնները, փաստերն ու դառն իրողութիւնները, ինչպէս եւ վկայութիւնները Յանձնախմբին ներկայացնեմ ու իմ պատասխանատուութեան լիարժեք հատուցանեմ:

Հետեւաբար, ստիպուած լինելով կրկնել իմ հրաժարականը եւ խնդրել ընդունել յարգանքս հաւատարմք:

17 Յունիս 1914

Յ. Շահրիկեան

Յ. ՆՇԱՆԵ ԱՆ ԷՖ. — Պարզ հրաժարական չէ այս:

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգ. Երեսփ. Ը զհ. Ժողովոյ

ՏՕՔԹ. Ս. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ. — Շահրիկեան էֆ. Յոգ անդամ ըլլալով կը ներկայացնէ իր հրաժարականը: Անգամ մը սկզբունքի խնդրոյ մը համար հրաժարեցաւ, որու մասին Իրաւասութեան գիւանը իր տեղեկագիրը ներկայացուց, այս անգամ ուրիշ առարկութեամբ կը հրաժարի. մենք համոզուած ենք որ չափի կրնանք ընդունիլ իր տեսակէտը, հետեւաբար պէտք կըլայ ընդունիլ իր հրաժարականը, թիւրիս իր տեղը ուրիշ մը գայ եւ ազգին օգտակար գործեր կատարէ: Ամէն պարագայի մէջ իրեն հանդէպ յարգանք ունենալով հանդերձ, պարտաւոր ենք ընդունիլ իր հրաժարականը:

ԱՏԵՆ. ԷՖ. — Մեր պաշտօնակցին այս բացատրութիւնը իրողութեան համաձայն չէ: Շահրիկեան էֆ. առաջին հրաժարականը տարբեր բան է, այս գիրը տարբեր բան է, պէտք է հրաւիրենք Շահրիկեան էֆ. իր առաջարկութեան վրայ պարզէ իր տեսակէտը: Ուրեմն Իրաւասութեան գիւանին զրկենք այս գիրը:

ՏՕՔԹ. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ. — Սկզբունքի խնդիր ըլլալէ առաջ Սահմանադրութեան խնդիր է այս, եւ օրինական խնդրոց քննութիւնը ըստ Սահմանադրութեան յանձնուած ըլլալով նոյն գիւանին, այս խնդրին ալ կրնայ անոր յանձնուիլ:

(Ժողովը 4ի դէմ 18 քուէով որոշեց յանձնել նոյն խնդիրը Իրաւասութեան գիւանին):

ՀԱՐՑՈՒՄ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ

ԱՏԵՆ. ԷՖ. — Բերայի թագ. Խորհրդոյ անդամոց ընտրութեան առթիւ՝ կատարուած քուէարկութեան գործողութեան նշանակաւ մեր պաշտօնակիցներէ ոմանց կատմամբ մեր պաշտօնակիցներէ, կը կողմէ հարցում մը ուղղուած ըլլալով, կը յանձնեմ ժողովիդ ուշադրութեան:

(Ատենապետ էֆ. կարգաց հետեւեալ գիրը):

Կը լսենք թէ Վարչութիւնը Բերայի թագ. Խորհրդի ընտրութեան մէջ տեղի ունեցած զեղծումի խնդիրը, խիստ երեւութական քննութիւնով մը փակած է, մինչդեռ մենք այնպէս կը կարծենք թէ զեղծումը անվիճելի էր եւ անաչառ քննութիւն մը կարող էր զայն երեւան հանել: Կը խնդրենք որ Վարչութիւնը հաճի բացատրութիւն տալ այս մասին:

Յարգանք

Ազգային Երեսփոխաններ

Վարդգես

Գ. Շահլամեան

Ժ. Սայապալեան

ՏՕՔԹ. ԴԱԻԹԵԱՆ ԷՖ. — Վարչութեան երկու անդամներու կողմէ այս մասին քննութիւն տեղի ունեցած է եւ չէ հաստատուած որ ֆէրատ էֆ. իր գրպանէն քուէները հանած եւ գետին նետած ըլլայ, այլ երեւան եկած է որ եկած քուէներու պոստները պատուած պահուէն, հոն գտնուողներէ ոմանց կողմէ եղած յարձակման վրայ, իր ձեռքը գտնուած քուէները, յուղումն ճմով կած եւ գետին նետած է: Ոչ միայն ֆէրատ էֆ. յայտարարութիւնը այլ եւ տրուած վկայութիւններ զայդ կը հաստատեն. արդ ու է զեղծում չկայ այլ թերացում կայ, այդ կէտը ճշդուեցաւ նաեւ Ընտրողական Ժողովին տեղեկագրով:

ԺԱԳ. ԷՖ. ՍՍՅԱՊԱԼԵԱՆ. — Ես իմ մասին որ եւ կերպով գոհացուցիչ չեմ գտնել Վարչութեան ատենապետին յայտարարութիւնը՝ որ իրողութեան համապատասխան չէ, որքան ալ ինք վստահօրէն խօսի թէ զեղծում չկայ՝ այլ միայն թերացում: Վարչութեան ատենապետը այնպիսի ոճով մը կը խօսի որ խոզները պիտի կարծէին թէ ինք հոն ներկայ եղած է եւ անձամբ հետեւած է գէպե-

րուն: Իսկ եթէ ատենապետը Ընտրողական Ժողովի տեղեկագրին վրայ հիմնուելով է որ այդ կերպով կը խօսի եւ կուզէ խնդիր փակել, դիտել կուտամ իրեն որ բուն իսկ բողոքը Ընտրողական Ժողովին դէմ էր արդէն իրողութիւնը երեւան հանել չուզելուն համար, հետեւաբար շատ պարզ է որ կերպով մը Ընտրողական Ժողովը ամբաստանուած է այս գործին մէջ, Արդ, ո՞ր տեսնուած է որ միայն ամբաստանուած կողմին բացատրութիւնները բաւական նկատուին խնդիր մը փակելու համար, եւ բողոքող կողմի վկաներէն ոչ մէկը լսուի Քաղ. Ժողովէն քննութիւն կատարելու համար գացած երկու անդամները այդպէս ըրած են ահա կը հարցնեմ Քաղ. Ժողովին թէ իր քննիչները ինչո՞ւ չեն լսած վկանները, ինչո՞ւ չեն ուզած նոյն իսկ ճշգիւ թէ Ընտրողական Ժողովին երկու անդամները որոնք համաձայն չեն գտնուած տրուած տեղեկագրին՝ ինչպատճառներ ունէին համաձայն չգտնուելու: Այս պարագան կը բաւէ ցոյց տալու կատարուած քննութեան ընդմիջումը եւ ես կը զարմանամ որ Քաղ. Ժողովը այսքան անյայտ կերպով թերի քննութիւնով մը այսպիսի խնդիր մը փակել կուզէ: Ես պիտի տամ ձեզի ժողովուրդէն հոն գտնուողներուն անուններ որոնք պատրաստ էին վկայելու եւ չեն կանչուած:

Սալիկ Քաֆէճեան՝ ատենապետ Տընտես. խորհուրդին, Այլըստան Գարադաճեան Ստեփան Թիֆլէսիցի, Վոսաճ Սրապեան, Արման Սալեբեան: Այս վերջինը ի մէջ այլոց ըսած է թէ ինք առաջ միշտ յանցանքը երիտասարդներուն կը գտնէր երբ ազգային խնդիրներու մէջ վէճ կը յարուցուէր, բայց հիմա համոզուած է այլ եւս որ երիտասարդները միշտ իրաւունք ունին եղբւր: Երբ ասանք կանչուին պիտի վկայեն որ տեսած են քուէթուղթերուն Ֆէրհատ էֆի գրպանէն իյնալը: Ասկէ զատ Ընտր. Ժողովի Նախագահ քահանան ըսած է Տօքթ. Պարտիզպանեանի եւ Լեւոն Քէվանեանի ինչ որ գիտէր կատարուած զեղծումի մասին: Արդ, Քաղ. Ժողովի եր-

կու անդամները որոնք քննութիւն կատարելու գացած եւ ամէն մեղքին վրայ, եզրակացութիւն մըն ալ բերած են, այս պարագաներուն եւ ոչ մէկը նկատի առած են: Ասիկա քննութիւն կատարելու. բաւական դարմանալի ձեւ մըն է. արգարիւ հիմայ մեր պահանջը այն է որ այդ թերի քննութիւնը ամբողջացուի եւ այդ լրացած քննութեան վրայ եզրակացութիւն մը բերուի հոս: Ես չեմ կրնար ըմբռնել որ Վարչութիւնը այսպիսի պահանջի մը կարենայ ընդդիմանալ եւ մանաւանդ բնաւ չեմ կրնար ենթադրել որ այս Ժողովը թող տայ Վարչութեան կողմէ այդպիսի ընդդիմութեան փորձ մը:

ՏՕՔԹ. ԴԱԻԻԹԵԱՆ Է.Ֆ. — Կարգ մը անուններ արուեստն այստեղ, ես այդ անունները առաջին անգամ Ըլլալով կը լռեմ, իսկ անոնք որ իբրեւ այս գործին մօտէն զիտակցութիւն ունեցող մեղ ներկայացուած էին, անոնց հարցոյցինք, բայց չկրցան հաստատել թէ բացատրուած կերպով զեղծում պատահած է, նոյն իսկ աւագերեց քահանան ալ չհաստատեց այդ կէտը:

Ա. ԿԵՆՃԵԱՆ Է.Ֆ. — Հիմայ քանի որ խնդիրը հոս եկած է, լսուի իս Ժողովին կրնայ ճշգիւ թէ իսկապէս պատահած են այն զեղծումները որոց մասին կը խօսուի:

Տ. ԽՈՐԷՆ ՔԶՅ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ. — Իբրեւ աւագերեց Բերայի եւ Նախագահ Ընտր. Ժողովոյ, պարտք կը համարիմ յայտարարել որ, ես երբէք չեմ ըսած որ գոյութիւն տեղի ունեցաւ: Մենք քուէթուղթերը կը բանայինք, այդ միջոցին զող եւ իստքերով աղմուկ մը քրդաւ եւ քուէներէն երկուքը՝ որոնք Ֆէրհատ էֆի ձեռքէն ինկած էր՝ հանուարեցան կողովին մէջէն, ես երբէք չեմ ըսած թէ աչքովս տեսած եմ Ֆէրհատ էֆի գրպանէն քուէ հանելը:

Ս. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Է.Ֆ. — Թերու գէմ այս խօսուածներուն վրայ կը հարկադ-

րութիւմ ամեն բան ըսել այլ եւս: Ինչպէս գիտէք քուէարկութեան մասնակցողներու թիւը շատ էր եւ քուէհամարը սկսուած էր 81/2ին: Ժամը 9 1/2ին նստած էի՝ քուէներու ստուգութեան սեղանին ըով երբ եւ կան իմացուցին թէ Գրիգոր էֆ. Ֆէրհատ գրպանը քուէ դրաւ: Ես առաջին անգամ չուզեցի հաւատալ, բայց երկրորդ մ'ալ եկաւ եւ նոյնը ըսաւ: Ես դարձեալ կարեւորութիւն չտուի, խորհելով որ եթէ զբուպանը դրած է անշուշտ գրպանէն դուրս պիտի հանէ: Ես նստած քուէներու ստուգման գործով կղբալէի երբ Ֆէրհատ էֆի վրայ եղաւ այդ յարձակումը, բայց նա որ քուէտուփի սեղանին ըով կը գտնուէր, առանց ինչնապաշտպանութեան որ եւ է խօսք ընելու, քուէաուփի սեղանին քուէն հեռացաւ եւ քիչ մը անդին գրպանէն հանելով քուէները նետեց սակառին մէջ: Նետուած քուէները ձմաթկած վիճակի մէջ էին: Ասկէ յետոյ է որ Ընտրող. Ժողովը քաշուեցաւ սենեակ եւ այնտեղ ընկերներու հետ տեղի ունեցան խորհրդակցութիւններ: Արկածեալ քուէները իմ ըովս էին, ձմաթկուած վիճակի մէջ եւ տեսնուեցաւ որ անոնք կը պատկանէին հակառակ հասանքին. եթէ ճշմարտութիւնը կուզէք, այն տեղ ես էի առաջարկողը որպէս զի հարկ եղած զգուշութիւնը կատարուի տեղի չտալու համար արդար ազաւեսալի մը, խորհելով որ Ընտ. Ժողովի անդամ Պ. Պ. Մինասեանի հետ պիտի կրնանք պատահած զեղծումը ներկայացնել Քաղ. Ժողովին: Այդ մտածումով թիւրիմա համար կ'ընդունիմ եւ իմ յանցանքս եւ եթէ ո եւ է պատիժ անորինուի պատրաստ եմ կրելու: Երբ Ժողովուրդը ընդգրկուեցաւ, եմ կրկին խորհրդակցութեան սենեակը մը կրկին խորհրդակցութեան սենեակը մը: Ընտրող. Ժողովոյ անդամները ընդհանրապէս ստիկանական ուղիով շարունակել քուէարկութիւնը, որուն հակառակեցանք եւ յետոյ երբ բոլորովին անպարտ ուղուեցաւ հանել Ֆէրհատ էֆին, մենք ընդգրկուեցանք եւ մնալով իրաւաստանողի գերին մէջ, Ահա այդ ցինը ահա տանողի գերին մէջ, Ահա այդ պարագային էր որ քուէարկութիւնը կա-

խակայուեցաւ եւ որոշուեցաւ տեղեկագրել գործը Վարչութեան: Արդ, կասկած չկայ այլ եւս թէ այդ երկու քուէները Ֆէրհատ էֆ. իր գրպանէն հանած է եւ փոխանակ քուէից ստուգումի սեղանին վրայ դնելու կամ գետին նետելու: 6—7 քայլ անդին գտնուող կողովին մէջ գացած նստած է: Ահա ասիկա այս է իրողութիւնը իր համառոտութեան մէջ եւ եթէ Ժողովը անբաւական կը տեսնէ կրնայ ուրիշ վկաններ ալ լսել:

Մ. ՀԱՅԿԱՋԵ Է.Ֆ. — Վարչութեան քննիչները բողոքող կողմէն մարդ լսե՞ր են:

Գ. ՉՕՀՐԱՊ Է.Ֆ. — Հարցումի մը Վարչութեան կողմէ տրուած պատասխանը երբ գոհացուցիչ չըլլայ, այն ատեն խնդիրը Օրակարգ կանցնի: Այսօրուան այս վիճաբանութիւնը հարցումի սահմանէն դուրս եկաւ. ես խնդրոյն մանրամասնութեան կը կարծեմ որ այս գործը լուսաբանութեան կը կարօտի, բայց այդ լուսաբանութիւնն ալ այս կերպով չկրնար ստացուիլ եւ ոչ ալ ընդհանուր վիճաբանութեան ձեռով կամ կարգ մը վկայութիւններ լսելով: Եթէ Ժողովը այս արտած տեղեկութիւնը բաւական չսեպեր՝ իրաւունք ունի Օրակարգ անցնելու խնդիրը, բայց ոչ այսպէս երկար խորհրդակցութեան նիւթ ընելու խնդիրը:

Հ. Է.Ֆ. ԽՕՃԱՍՍԻԵԱՆ. — Ես կը նըշմարեմ այս ընտրական խնդրոյն քննութիւնը պէտք եղածին չափ խզճմութեամբ չէ կատարուած եւ վկաններ ալ չեն լրսուած, այնպէս որ այստեղ խնդիրը իր բոլոր կողմերով նկատողութեան առնել կարելի չէ, քանի որ նախնական քննութիւնը թերի եղած է, հետեւաբար չափ կը տեսնեմ որ լիակատար քննութիւն մը կատարէ Վարչութիւնը եւ արդիւնքը բերէ:

Դ. Է.Ֆ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Ես հաւատակը չպիտի բռնեմ, բայց կէտի մը մէջ կը տարբերեմ իրարմէ: Մեր կողմէ տըր-

ուելիք այսպիսի որոշում մը նախ եւ ա-
ռաջ գործադիր իշխանութեան պաշտօնին
կը՝ հակառակել: Վարչութիւնը քննութիւն
մը կատարելու պէտք տեսեր եւ կատարե-
ր է, այլ եւս իրաւունք չունինք ըսելու որ
Վարչութիւնը վկաներու յայտարարու-
թիւնը պէտք էր առնէր չէ առեր, կամ
ինչու չէ առեր եւն, ասոնք հարցապնդ-
ման հետ ըլլալիք խնդիրներ չեն, հետեւա-
բար եթէ Վարչութիւնը ուզէ կամ պէտք
տեսնէ կրնայ նոր քննութիւն մը կատա-
րել:

ՏՕԲԹ. ԴԱԽԻԹԵԱՆ ԷՖ. — Վարչու-
թիւնը ու եւ է լրացուցիչ տեղեկութիւն
չունի հաղորդելիք այս մասին: Մենք խն-
դիրը քննած եւ համոզում գոյացուցած
ենք, իսկ եթէ Աղդ. Ժողովը կը պնդէ ան-
պատճառ նոր քննութեան մը պէտքին վը-
րայ, այն ալ նկատողութեան կ'առնենք:

Ա. ՎԱՍԻՍԵԱՆ ԷՖ. — Երբ կարգ մը
վկայներ չեն լսուած կըսուի, պէտք կ'ըլ-
լայ որ լսուին անոնք, ու եւ է մարմնոյ կամ
դատարանի առջեւ երբ խնդիր մը կը քն-
նուի կրնայ ըսուիլ թէ ունի նոր վկայու-
թիւններ եւ կը լսուին այդ վկայութիւն-
ները: Այս խնդրոյն մէջ ալ բան մը չկայ
ըսելու համար՝ պէտք է լսուին այդ վկա-
յութիւնները:

Լ. ՏՆՏԵՍԵԱՆ ԷՖ. — Այստեղ խօսք
կ'ըլլայ թէ այս կամ այն անձերը ներկայ
գտնուել են ընտրութեան միջոցին եւ տե-
սեր են պատահած ապօրինաւորութիւննե-
րը: Սակայն կը հարցնեմ թէ Ժողովը կըր-
նայ ըսել որ ինչպէս պիտի վաւերացնենք
թէ այդ վկայութեան կոչուած անձը
ընտրութեան պահուն այդտեղ գտնուած
եւ իրենց աչքով տեսած են ինչ որ կը
պատմեն:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ընդհանուր տրամադրու-
թիւնը այն է որ, կարգ մը լրացուցիչ
քննութիւններ կատարուին եւ Վարչու-
թիւնն ալ հակառակ չէ ասոր. բայց քանի

որ կատարուած քննութիւնը բաւարար հա-
մարողներ ալ կան, այս կէտը ձեր քուէին
կենթարկեմ:

(Ատենապետ ԷՖ. քուէի գնելով այս
խնդիրը 35 ձայնով որոշուեցաւ վերստին
Վարչութեան յղել խնդիրը կարգ մը լրա-
ցուցիչ քննութեանց համար:)

Ս. ՊԱՏՐԻԱՐԲԻՆ ՀԱՐՅՈՒՄԸ

Նախաձեռնութեան Դիւանի Տեղեկապիրը

ԱՏԵՆ. ԷՖ. — Կը յիշեք տեարք՝ որ
լրագրական հրատարակութեան մը առթիւ
Ս. Պատրիարքը հարցում մը ըրած ըլլալով
Ժողովի, զրկուած էր Նախաձեռնութեան
Դիւանին:

Դիւանս հարկ եղած քննութիւնը կա-
տարելով, իր եզրակացութիւնը ըսած է
Ժողովի, ձեր ուշադրութեան կը յանձ-
նեմ:

(Ատենապետ ԷՖ. կարգաց հետեւեալ
գիրքը:)

Վսեմաշուք Ատենապետ ԷՖէնտի
Աղդ. Երեսփ. Պատկ. Ժողովոյ
Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր Աղդ.
Ժողովին ուղղած 25 ապրիլ 1914 թուա-
կիր զիտողապիր Ժողովոյ որոշմամբ նա-
խաքննութեան համար Դիւանին յղուած
ըլլալով Դիւանս յիշեալ գրութիւնը յա-
րակից յօդուածով միասին քննեց:

Դիտողապիրը երկու կէտի վրայ հիմ-
նուած է. մին՝ թէ երեսփոխան մը Աղդ.
Ժողովէն գուրս կրնայ հրապարակա-
յին հարցումներ ուղղել Պատրիարքի մը.
միւսը՝ թէ Պատրիարքին զէմ հրապա-
կաւ անվայել լեզու գործածող երեսփո-
խանի մը հանդէպ ինչպէս պէտք է վար-
ուիլ:

Սայապալեան ԷՖ ի յօդուածին առթիւ
ուղղուած սոյն պատրիարքական բողոքը
սկզբունքի խնդիր մը կը յուզէ, որուն
կտրեւորութիւնը յայտնի ըլլալով՝ Դիւանս
կը կարծէ որ Աղդ. Ժողովը սոյն սահմանա-

զրական հարցի մասին պարտաւոր է իր
օրէնսդրի հայեացքը պարզել, մասնաւոր
քննութեան մը առարկայ ընելով զայն:
Հրապարակային քննադատութեան հար-
ցին սկզբունքին մասին անհատի մը եւ
ազգ. երեսփոխանի մը միջեւ օրինական
խնդիր ու տարբերութիւն գոյութիւն չի
կրնար ունենալ, որովհետեւ բացայայտ է
թէ երեսփոխանութեան պաշտօնը անհա-
տին սահմանադրական իրաւունքն ունա-
ղում մը չենթադրէր, որով, ինչ որ ներե-
լի է անհատի մը, աւելի իրաւունքով թոյ-
լաւորելի պէտք է համարուի երեսփոխանի
մը համար. արդ՝ թրքահայոց սահմանադ-
րական իրաւակարգերով Պատրիարքը իբր
գործադիր իշխանութեան պետ, անքննա-
դատելի չէ՝, ինչպէս վարչական լոյր
պաշտօնեաները, վճարուած թէ՛ անձնուէր:

Դալով երեսփոխաններու ազգ. Ժո-
ղովէն դուրս հրապարակային քննադատու-
թեան իրաւունքին, Դիւանս համոզուած է
թէ սահմանադրական վարչութեամբ կա-
ռավարուած ազգի մը անհատներու կար-
ծիքի ազատութեան սկզբունքը՝ նուիրա-
գործուած բոլոր քաղաքակիրթ օրէնքնե-
րէն՝ վարչական խորհրդածութեանց եր-
բէք չեն կարելի յետադասուիլ. Ժողովի
մը չըջանակին մէջ՝ ո՛րչափ ալ գերազոյն
ըլլայ նոյն Ժողովին հեղինակութիւնը, ի-
րաւ է որ մեծամասնութիւնը օրէնք գնե-
լու իշխանութիւնը ունի, բայց սոյն հը-
պատակելի իշխանութեան զէմ ընդվզում
պատակելի իշխանութեան իր կար-
չնկատուելի փոքրամասնութեան իր կար-
ծիքը պաշտպանելու ազատութիւնը՝ Ժո-
ղովէն ա՛լ դուրս, առանց ասոր, յատկա-
գիմութիւն, բարեչըջում չկրնար գոյու-
թիւն ունենալ. հետեւաբար Դիւանս կը
կարծէ թէ՛ Աղդ. Ժողովը պարտաւոր է
կարծէ թէ՛ Աղդ. Ժողովը պարտաւոր է
այս առթիւ միանգամ եւս հանդիսու-
թիւն արժանապատուութիւնը եւ ազգային
բունքը, պատասխանելով իր Ս. Նախա-
գահին հարցման, զոր Դիւանս կը նկատէ

անկեղծ եւ յարգելի զգացում մը, պատ-
րիարքական դժուարին պաշտօնին պարտա-
կանութիւնը ազգօգուտ կերպով գործադ-
րելու կամքէն միայն բխած:

Իսկ երկրորդ քննելի կէտը, որ պատր-
իարքական բողոքի գլխաւոր առարկան
կը կաշմէ, յօդուածին անվայել լեզուով
մը խմբագրուած ըլլալու առարկութիւնն
է, զոր գիւտնա ուշադիր քննութեան են-
թարկելէ յետոյ Ժողովի կը մատուցանէ
իր կարծիքը: Արդարեւ, մեր պաշտօնակի-
ցը Սայապալեան ԷՖ. բուն եւ զգայա-
ցունց եղանակ մը տալու համար իր քննադա-
տութեան, զոր բաց նամակի ձեւով մը
ուղղած է, եւ ո՛չ թէ օրինական հարցու-
մի մը, ինչպէս կը կարծէ Ս. Պատրիար-
քը, կը գործածէ այնպիսի բառեր եւ ա-
ստութիւններ որոնք երբէք ներելի չեն ե-
րեսփոխանի մը քննադատականին մէջ,
քանի որ ասոնք կը խմբագրուին անպայ-
մանօրէն սկզբունքի, անկեղծ համոզումի,
ազգային շահերու թելադրութիւններով
միայն: Դիւանս վստահ մեր պաշտօնակցին
համոզումին անկեղծութեան վրայ, կը
կարծէ թէ՛ մեր Ս. Նախագահին ուղղուած
նամակի մը մէջ գտնուած յետադայ բա-
ռերն ու պարբերութիւնները գործածուած
են գրչի անհամբեր թախով մը, եւ ոչ թէ
անարգանքի զիտումով, ինչպէս կը կար-
ծէ Ս. Նախագահ Հայրը: Հետեւաբար,
Դիւանս (խօսքերու տղայական, պատաս-
խանի անարժան նկատում), (Ժողովին նա-
խագահին կողմէ օրէնքներու անդիտա-
ցումի ենթադրում), (զիտողութիւն մը
պատրիարքի բերնին մէջ անպատեհ եւ
անտեղի նկատել), (Պատրիարքի մը նկա-
րագրին եւ կարողութեան մասին տած-
ուած անկալալութիւններու անկասկած
ոտնակոխում), (պատրիարքական աթո-
սին արժանապատուութիւնը եւ ազգային
Ժողովին կամքը Պատրիարքին քմահաճոյ-
քին գոհելու ենթադրութիւն) եւլն. եւլնի

պէս բաւեր ու պարբերութիւնները պար-
սաւելի նկատելով երեսփոխանի մը բեր-
նին մէջ, կամ գրչի տակ, կ'աւաջարկէ
Ժողովի ընդունիլ սոյն տեսակէտը եւ
բաւականանալ հանդիսաւոր արտայայտու-
թեամբ մը :

Նախաձեռնութեան Դիւան
Ռ. Փափագեան Պ. Խորասանեան
Դ. Տ. Մովսէսեան

Գ. ԶՕՀՐԱՊ ԷՖ. — Դիւանական թղ-
թակցութեանց կարգին, այս խնդիրը յու-
ղելու իրաւունք չունինք: Ժողովը դիւա-
նական թղթակցութեանց կարգին՝ միայն
ներկայացեալ դրութիւնները կը կարգայ
եւ պատկանեալ մարմիններու յղումները
կորոշէ, իսկ եթէ այդ խնդրոյն վրայ վի-
ճաբանիլ կուզէ ստիպողականութիւնը որո-
շելով Օրակարգ կանցնէ: Երբէք տեղ մը
չկայ որ դիւանական թղթակցութեանց
կարգին, այսպիսի վիճաբանելի խնդիրներ
նկատողութեան առնուի :

Դ. ԷՖ. ՏԷՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ. — Ես
խնդիրը Օրակարգ անցնելու ստիպողական
պէտք չեմ տեսներ, քանի որ տեղեկագիրը
եզրակացութեամբ մը կը ներկայանայ այս
Ժողովին: Եթէ այս Ժողովը ալ գոհանայ
որ այդ հրապարակաւ եղած արտայայտու-
թիւնը պարսաւելի է, այլ եւս խնդիր չմը-
նար եւ բնականաբար Օրակարգ կանցնիր :

Գ. ԶՕՀՐԱՊ ԷՖ. — Ո եւ է խնդրոյ
մը մասին պարսաւելի է՝ ըսելը բարոյա-
կան վճիռ մ'է, որ վիճաբանութեամբ
կրնայ որոշուիլ, հետեւաբար կարելի չէ
պարզապէս տեղեկագիրը կարդալով այս-
պիսի եզրակացութեան մը յանգիլ, ուստի
այդ պարագային պէտք կ'ըլլայ խնդիրը
Օրակարգ անցնել :

Ա. ԷՖ. ԳԱՍՊԱՐԵԱՆ. — Այս խնդիրը
ըստ օրինի Օրակարգ կանցնի, բայց որով-
հետեւ ստիպողութիւն կը տրուի այս պա-
հուս, կրնայ անմիջական կերպով նկա-
տողութեան առնուիլ :

ԱՏԵՆ. ԷՖ. — Քանի որ թեր ու գէժ
կարծիքներ կը յայտնուին, հետեւաբար
Ժողովիդ կը մնայ արտայայտուիլ թէ այս
խնդիրը անմիջապէս նկատողութեան առ-
նել կուզէ թէ յաջորդ նիստին Օրակար-
գը անցնել :

(Ժողովը 13ի դէմ 28 քուէով որոշեց
անմիջապէս նկատողութեան առնել:)

ԱՏԵՆ. ԷՖ. — Առաջին խօսքը Նէմյէ
էֆ. ուղած ըլլալով կը հրաւիրեմ զինքը
խօսելու համար այս խնդրոյն նկամամբ :

Գ. ՆԵՄՅԷ ԷՖ. — Ես չէ որ պիտի գամ
յայտարարել թէ երեսփոխանի մը պար-
տականութեան սահմանը այս չորս պա-
տիրէն անցին չանցնիր: Ես չէ որ պիտի
ըսեմ թէ Սահմանադրութիւնը մեզ իրա-
քանչիւր երեսփոխանիս, գծած ու վճռած
ըլլայ, թէ ձեր պաշտօնը հո'ս կ'աւարտի,
ու ասկէ դուրս ա'լ չունիք իրաւունք,
այսինքն ա'լ չէք կրնար դատել, տրամա-
բանել, ա'լ չէք կրնար խորհիլ, ընտաղա-
տել :

Սահմանադրութիւնը, Տեարք երեսփո-
խանք, ո'չ կապանք կը դնէ միզ, ո'չ ալ
փականք . . .

Երեսփոխանի մը կենսական խնդիրնե-
րու մասին, ազգային ո'րեւէ անհատի մը
պէս, կրնայ եւ պէտք է ունենայ իր առ-
ջեւ անպարտելի ասպարէզ, թէ վերլու-
ծելու բարդ ի բարդ կնիւններ, եւ թէ
մատնանշելու հանրօգուտ կամ հանրավը-
նաս երեւոյթներ :

Արդ խնդիր է դիմաւ թէ երեսփոխան
Պ. Ժաք, իսկապէս ազգօգուտ հարց մը,
սահմանադրական ու օրէնսդրական սկզբ-
քօնք մը ընդգրկել, վերլուծել, պատճա-
ռաբանել, կամ դատապարտել է, թէ ոչ,
ասոնց բոլորովին հակառակ ու լիովին հա-
կոտնեայ նպատակ մը որդեգրել է:

Ահա, ինչ որ կուգամ ի վեր հանել,
չմոռնալով անտես առնել Պ. Շահրիկեանը,
որ չուշացաւ անոր ետեւէն համեմուտ, իբր
արամաղդ մը, արդարապէս, բայց նաեւ,
տհարկու . . . եւ անհրաժեշտ :

Ուրեմն անցնինք մեր նիւթին, եւ ինչ
ալ լաւ ըսած է Նեային, «Լա'յ դպրաց որ
գրին չարիս» :

Ահա՛ աչքերնուս առջեւ է սա «Ազա-
տամարտ»ը, եւ ուր պիտի գտնենք մեր
հոշակաւոր փայլա'կը . . .

Բայց նախկին Պատրիարքին
ու քիչ մը վարը. Սրբազան,

Ապաքէն, օտարական մը իսկ որքան
ալ ուղէր, շատ ու շատ պիտի խորհէր ու
թոյլ չպիտի տար ինքզինքին, ազգի մը
զահակալին դէմ, կանգնիլ խորհրդաբար
ու ըսել, «Սրբազան' . . . ասիկա այն չեղ-
տը ունի, ինչ որ կրնայ թարգմանուիլ,
Սարգիս էֆ. Էսմէրեանի բացատրու-
թեամբ . . . «Պէ առամ . . . »

Շարունակենք զինքը, «այդ անտեղի
աղմուկին մէջ լսուեցաւ, նաեւ ձայն մը որ
կըսէր ինծի իբր պատասխան. «Դուք եր-
րուսաղէ մի կանոնադրին յօդուածները 14
հոգիով ալ քուէարկեցիք» . . . «Ես այդ պա-
հուն չկրցայ զանազանել թէ ո'վ արտասա-
նած է այդ խօսքերը, ուսնքան հղայական
ինքնին որոնց իսկ պատասխանի արժանի
նկատեցի զանոնք» . . .

Իսկ երբ կ'իմանայ պաշտօնակիցներէն
թէ Ս. Պատրիարքն է եղեր . . . կը դար-
մանայ յոյժ եւ յոյժ. — Եւ զիտէ՞ք ինչ կ'ը-
նէ. — Ոչ թէ քաղաքավար մարդու մը
վայելչութեամբ, եւ ո'չ թէ երեսփոխանի
մը պատշաճ օրինասիրութեամբ, ներկայա-
նալու նախադաս Ս. Հօր, եւ բացատրու-
թիւն խնդրելու, կ'եւլէ անմիջապէս, սա
«Ազատամարտ»ին մէջ գիշակեր ազաւի մը
նման Հայոց պատրիարքին վրայ կը յար-
ձակի խոշոր խոշոր պատգամներ կ'որո-
տայ, դատեր տալու չարաբաստիկ պաշտօն
մը կ'ատանձնէ, անոր հողինակութիւնը վար
մը կ'ատանձնէ, հարցում գ'Անի
կարեկելով, եւ հարցումէ հարցում գ'Անի
ընդ քարչ ամեկով, ճիշտ հր'ի մը ճանկին
մէջ բռնուած Յիսուսի մը նման, գ'Անի
այգանելով եւ հեգնելով, եւ զեռ մինչեւ
հոս իր գործը չաւարտի, տեարք երեսփո-
խանք, ու զեռ Պիղատոսի մը առեւտին
խանք, եւ զեռ Պիղատոսի մը առեւտին
առջեւ կը գտնուի չէ՞ք Զուէն Պատրիարք
զեռ զտանուտէրն բեհեզգերու'զ պիտի ան-

ուանէ, եւ զեռ դատաւորն ժաք պիտի
հարցաքննէ զԱնի, «14 հոգիով, կանոնա-
գրի յօդուածները քուէարկուած առեւտ
դուք պատրիարքական աթոռին վրա'յ
էիք, թէ ո'չ» . . .

Ու կը սկսի չարունակել իբր նոր իմն
Պիղատոս. — «Եթէ հո'ն էիք, պէտք է
ընդունինք որ, այդ սպորինուքեան
ամենամեծ պատասխանատուն դուք էիք,
քանի որ թոյլ տուած էք, ապօրինի զը-
ուէարկութիւն կատարել, մինչդեռ ձեր
Սահմանադրական իրաւունքն ու պար-
տականութիւնն էր՝ օրէնքն յիշեցնել ե-
րեսփոխաններուն» :

Չեմ գիտեր թէ կառավարչի՞ թէ վար-
ժապետի, ժամկո'չի թէ այլ ինչի գեր մըն
է որ կը վերադրէ Զուէն Սրբազանի,
զանգակը Ա.Պ. պիտի հնչեցնէ, չուանը Ա.Պ.
պիտի քշէ որ Սայապալեանները ի գի-
տակցութիւն եւ ի պարտաճանաչութիւն
զան . . . : «Իսկ եթէ հոն չէիք—կըսէ
մեր օրէնսգէտ դատաւորը—ինչէն զիտէք
որ 14 հոգիով եղած է քուէարկութիւնը, եւ
ինչպէս կը թոյլատրեի դուք ձեզի Ազգային
Ժողովի մէկ որոշումը քննադատել այդ-
պէս թեթեւ օրէն» :

Զ'ըսենք հիմա, մենք ալ, իրաւ «Հայ-
հոյեաց Յիսուս» :

Մարդ մը ժաք ըլլալու է որ այսքան
անմտօրէն, եթէ կուզէք եւ թեթեւօրէն,
վճիռներ արձակէ Հայոց Պատրիարքի մը
դէմ . . . :

ԱՏԵՆ. ԷՖ. — Չեմ կրնար իրաւունք
տալ որ այնպիսի անձնական ակնարկու-
թիւններով չարունակէք ձեր խօսքը :

Գ. ՆԵՄՅԷ ԷՖ. — (չարունակելով) ա-
նոր՝ որուն, որպէս թէ յանցանք է եղեր
հոն չգտնուելովը՝ զիտցած ըլլալուն թէ,
որքան հոգիով քուէարկուել է, կը հար-
ցնեմ հիմա հ'ս ալ միթէ լրագիրները չի
գրեցին, միթէ ատենագրութիւնները չի
վկայեցին, եւ միթէ ներկայ գտնուող
երեսփոխանները idiotներ . . . էին, թէ
խուլեր ու կոյրեր :

Ու երբ մէկ կողմէն կը վճռէ Սայա-
պալեան թէ «Ժողովը կրնայ թերանալ

բայց Պատրիարք մը ո՛չ: Ասի ալ այնպիսի վարդապետութիւն մըն է որ առ Հայոս երբեք գոյութիւն չկրնար ունենալ, Պատրոն ժառ, լաւ է որ այդ՝ ի մէջ Հուովմէականութեան միայն փնտռէք, ուր թեւեւս դուք ալ անկասկած կը տարուբերեք, քանի որ ձեր անունէն իսկ, շատ ու շատ կը մատնուիք... Եւ դուք ի նոցանէ չե՞ք...

Հէք Սայապալեան, իբր երեսփոխան, ախուր հարկին մէջ կը գանուի եղեր, Պատրիարքի մը ետեւէն խօսելու, իրաւ է տխուր հարկ մըն է այդ Պատրոն ժառ զոր ստանձնած էք, եւ այնքան ախուր որ ձեզմէ ի զատ ոչ ոք պիտի համարձակէր ստանձնելու:

Կը հարցնեմ հիմա ինչո՞վ արդեօք Զաւէն Սրբազան, աթոռին արժանապատուութիւնը չէ պահէր:

Ինչո՞վ Ազգային Ժողովին կամքը չէ յարգէր:

Ինչո՞վ իր նկարագրին ու կարողութեանը մասին ակնկալութիւնները չէ պըսակեր:

Երուսաղէմի խնդրոյն մէջ բռնած իր դիրքով, այնպէս չէ... Այդ խեղճ երուսաղէմի ամենախեղճուկ ծրագիրը, որ շատ լաւ գիտենք թէ քանի հոգիներով եկաւ ի լոյս աշխարհ, ի՞նչ ցրտասարսուռ եւ կամ ցաւասարսուռ երկունքներով, եւ ուրոնց արդիւնքն ուրիշ բան չեղաւ եթէ ոչ, «մուկն չնչի՛ն»... Ու այդպէս ալ պիտի ըլլար քանի որ ժառ Սայապալեան ներ անասակ ու անտեղեակ գոլով վանական ու տեղական պահանջներուն, զորով ծնունդ կուտային անոր եւ ընդ առաջ կը վազէին հեռանկար ու ոսկեծածաղ անուրջներու...

Բայց չեմոնանք թէ այդ անփութունակ ու անկենսական ծրագրին գէժ ծառացան Դուրեանն ալ, Օրմանեանն ալ, ընդզգեցան Մանկունին ալ, եւ Դիմաքսեանն ալ: Ու երբ Պատրիարք Սրբազանն ալ մասնաւոր գաղափարներ ունի այդ մասին — ինչպէս կ'ըսէք դուք — ո՞վ կ'ընայ բռնանալ իր վրայ, եւ սակայն նա երբեք ու

երբեք չբռնացաւ ու չբռնաբարեց ո՛չ ազգին կամքը, ոչ ալ տրուած որոշումը: Պատրոն թէքէեանը որ այսօր հոն ոչինչ ունի ընելիք, ու միայն դատարկ անտուկին վրայ կը ծանրանայ Զեր չնորհիւ — ան ալ զրկուեցաւ:

Հոս կարծեմ աւելորդ իսկ է կրկնել թէ Զաւէն Պատրիարք՝ Վարչութեան հետ համախոհ՝ բրաւ այն ինչ որ միակ բանաւոր լուծումն էր, ինչ որ ամենուս ալ բաղձանքն էր, եւ ինչ որ կը պահանջէր երուսաղէմի շահն եւ հմայքը, եւ դարաւոր վանքի մը սեփական վաճիկը:

Այսչափս բա՛ւ, մեր Պիղատոսին՝ ժառին համար, որ արգարեւ պիտի չկարենայ ձեռքերը լուսնալու ըսել իր այս անարգ գործովն ի «թանին» եւ գրչաւն յ«Ազատամարտ» թէ «քաւալ եմ յարեմէն Սրբաբոյժ...»:

Անցինք հիմա Պ. Ծահրիկեանին:

Ան ալ պատասխանատու կը բռնէ Հայոց Պատրիարքը որ առ ի չզոյէ լաւագոնին բնորումը, որ Կարնեցոյ 200 ոսկի ծախսելու պատճառ եղած, եւ որ ելեր ըսեր է «գուք, 14 քուէով ալ ընտրութիւն կատարեցիք»:

Ահա նորին Սրբազնութեան անքաւելի յանցանքները, որոնք կը հրապարակուին օրէնագէտի համբաւ, եւ տրամախոհութեան հոչակ հանած Պ. Ծահրիկեանէն, եւ զորս ուսմբի պէս կը տեղացնէ Սրբազան Հօր գէժ:

Քննենք պահ մը թէ ո՛րքան իրաւացի են այս փաստերը, եւ ինչ հիմանց վրայ կ'առուցուած:

Երբ Վարչութեան հրահանգին համեմատ նորին Սրբազնութիւնը Հայկական Նահանգներու գիւղերն ու քաղաքները այցելելով անձամբ կը տեղեկանար անոնց տէրաին ու դարձին, ու երբ այդ քաղաքները, ըստ Կեղը. Վարչութեան պատուիրանաց կ'ելնեն փառաշուք ընդունելութիւններ կը սարքեն, ի պատիւ ո՛չ թէ Զաւէն Սրբազանի անձին, այլ ի պատիւ Հայոց Ազգին՝ որուն գլուխն ու ներկայա-

ցույթին ընտրուած է, հիմա ասոր մէջ ի՞նչ դեր ունի Զաւէն Սրբազան, կրնա՞յ ըսել թէ զիս խեղճուկ առաջնորդի մը տեղ ընդունեցէք, ու փարա մը իսկ չըլլայ որ խարճէք: Հիմա ո՞վ չըմբռնէր թէ ո՛չ յանցանք կայ հոս ու ոչ ալ յանցաւոր, արդէն բողոքող ալ չկայ, եւ ինչո՞ւ ըլլայ եւ որո՞ւ գէժ ըլլայ...:

Գալով «գուք քուէարկեցիք»ին՝ մեր Ծահրիկեան Յարութիւն էֆէնտին, արդէն արամաբան մը ըլլալէ զատ, ինչպէս ըսի վերեւ, հոս ալ իբր հայկաբան մը կուգայ ի հանդէս, Զեր «գուք»ը կ'ըսէ նա Պատրիարքին, «իւ հակադիր նշանակութեանը վերածելով, կ'ունենանք «մենք», եւ կը հետեւցնէ ներսուն քերական Ծահրիկեան, թէ, քանի որ դուք՝ «մենք»ի մը ներկայացուցիչն էք պէտք է որ վար իջնէք այդ գահէն ու նստիք «մենք»ի աթոռներուն վրայ:

Ի՛նչ, ինչո՞ւ կը մոռնայ Ծահրիկեան էֆէնտին, թէ ամէն «գուք» իր հակադիր եւ անխտիր «մենք»ը չունենար, թէ այդ օրինակ հայկաբանութիւնը թէկուզ ուրիշներու, բայց դոնէ ինծի չէ կարելի կուլ տալ, վասն զի Պատրիարք Սրբազանին արտասանած այդ հուշակաւոր «գուք»ը, հոչականուն երեսփոխանութեան կ'երթայ, միայն անոր հասցէին կ'ուղղուի եւ ոչ թէ, այս ու այն խմբակին, Աւելի բացորոշը ըսեմ, Սրբազանը ակնարկած է որ, «գուք երեսփոխանքդ, 14 քուէով ալ ծրագրիներ քաղցուցիք» Ուստի եւ, ասիկայ պարոն Ծահրիկեան իր հակադիր «մենք»ը չունենար երբեք, քանի որ այն չեղաւիկ երեսփոխանութեան հասցէին կ'ուղղուի:

Բարի՛ հիշէք ուրեմն Ծահրիկեան էֆէնտին հայկաբանութիւնը չեղձանելու, չի լսալ խաղաղութիւնը, եւ ոչ իսկ խաղաղութիւնն ալ վարութիւնն ալ, տրամաբանութիւնն ալ:

Դառնալով Պատրիարք Հօր, միւս եւս ամենամեծ յանցանքին: Եւ որով «առ ի չզոյէ լաւագոնին» ընտրուած է նա, եւ ի չզոյէ լաւագոնին» ընտրուած է նա, եւ ի չզոյէ լաւագոնին, այնպիսի մեծ յանցանք տարկայ, յիշուի, այնպիսի մեծ յանցանք մը կը պակսի միւր, ասոնք անվրէպ բա-

պէտք է քաւէ, այլ այս երեսփոխանութիւնը որ յանգէտս Անոր, իր մեծամասնութեամբ քուէարկեց եւ կարծեմ ի բաց առեալ Զեր 7-8 հոգիի ձեռնպահութեամբ: Հետեւագէտ լաւագոնի մը չգոյութեան յանցանքը Սրբազանին չպատկանիր, այլեւ անոնց որոնք լաւագոնը իրենց աչքին առջեւ ունենալով հանդերձ, անկէ 40 մղոն հեռուները փախան... Ու հիմա նրկել Պատրիարք Հօր այդ օրինակ դիտողութիւն մը ընելը՝ միթէ ծաղրելի չդարձնէր Սահմանադրութիւնը, եւ կամ ծիծաղելի՝ Օրէնքն ու երեսփոխանութիւնը... Դու որ Օրէնսդատութեան հերոսն ու քրմապետն ես առ մեզ, քե՛զ կը թուում զայդ որակելու պաշտօնը, Ծահրիկեան էֆէնտին, հակառակ որ, ինչպէս աշխարհածանօթ մըն եմ իմ քովս ո՛չ ածական կը պակսի առ այդ, եւ ո՛չ ալ գոյական... Ուրեմն կ'անցնիմ ես այդ յանցանքին վրայէն, որ ըստ ինքեան Ծահրիկեան էֆէնտին քու իսկ մեծագոյն յանցանք է ո՛չ թէ Պատրիարք Հօրը, եւ ո՛չ ալ մերը:

Ըստ այսմ չեմ ըմբռնիր ու չեմ հասկընար թէ ինչո՞ւ են այս բոլոր կծու եւ զկծեցուցիչ մեղադրանքները, այս կուլ ու չի բարութանքներն ու բարանքները: Ինչո՞ւ են այս սայրասուր պաքներու յորդանքները որով կ'ողողէք Պատրիարք Հօր գահը, ուր չէ թէ Զաւէն Սրբազանն է որ խեղդամահ պիտի լինի, այլ պատիւը Հայ Ազգութեան, եւ հեղինակութիւնը՝ Պատրիարքութեան:

Արդ, տես՛րք երեսփոխանք մեր գահակալը եւ՝ Նախագահը, այսպէս յուժկէտս եւ յանգէտս արհամարհողները պէտք է պատժուին, մանաւանդ անոնք որոնք ազգային երեսփոխանի հանգամանք կրելով, կը ժառն քանի անգոսնելի դարձել ինչ՝ հրապարկաւ, ազգային թերթերու մէջ, եւ թէ՛ ի մէջ թուրք թերթերու: Այսպիսի ապօրէնութիւն մը երբեք չներուիր: Ահա իմ եզրակացութիւնս, եթէ հնար չէ ըսել, իմ վճի՛րս եթէ նիւթական պատիւ մը կը պակսի միւր, ասոնք անվրէպ բա-

բոյական է՛ն մեծ պատիժը, որով միայն փրկած կ'ըլլանք Հայոց Պատրիարքը տիրանենք Երեսփոխաններէ :

Այս ժողովին մէջէն վերցնելու է միանգամ ընդ միշտ սանձադաժութիւնը վերցնելու է այս Ազգին մէջէն անխնայ նութիւնը կամ մեր էսմէրեանի բառով, «ա՛ պաշրպօզութիւնը»...

Ազատութիւնն ալ. Տես՛րք Երեսփոխանք, իր սահմանը ունենալու է եւ Սահմանադրութիւնն ալ իր չափն ու կշիռը :

Ու այս պայմանը որդեգրելով հանգեւրձ, պէտք է դառնալ իրենց ու կրկնել կամպէթթայի հոգակա որ խօսքը, «Պարոններ, այլ եւս ձեզ կը մնայ ou se soumettre, ou se demettre...»

Այսինքն, կամ հնազանդիլ, կամ, հրաժարիլ... : (1)

ԴԱԳ ԷՖ. ՍԱՅԱՊԱՆԱՆ. — Պարոններ, նախորդ բանախօսին խօսքերուն չափ տի կրնամ պատասխանել, նախ անոր համար որ մեծ բան մը կարելի չեղաւ հասկնալ իր ըսածներէն եւ երկրորդ անոր համար որ զաւելջական հանգամանք մը տալ չեմ ուզեր այս գործին : Կարելի եղածին չափ համաձայն պիտի խօսիմ : Արդէն, ճիշտը ըսելու համար ես համամիտ չեմ այս խնդրոյն հոս բերուելուն : Եթէ այս գործին այս համաձայնութիւնները տալ ուզէի, առաջին օրէն, փոխանակ լրագրի մէջ գրելու, կրնայի ուղղակի հոս բերել եւ իմ երեսփոխանի իրաւունքն մէջնէր անշուշտ ատիկա Բայց հիմայ որ խնդիրը բերուած է այս ժողովին ես պէտք է պատասխանեմ : Այս խնդիրը երկու հանգամանք ունի. նախ էութիւնը եւ ապա ձեւը : Նախ ձեռնութեան զիւանք քննարկ է միայն ձեւը եւ ատոր վրայ հիմնել է իր եզրակացութիւնը. էութիւնը չէ քննած, որովհետեւ, ինչպէս կ'երեւայ, զժողովութիւնը գտեր է այդ մասին իր ուղած եզրակա-

(1) Այս բանախօսութեան ժողովին մէջ չկարողացուած մասին մէջ գտնուած անձնակաւ ակն աւուրքիւնները յայտնուած են դիւանիս կողմէ :

ցութիւնը հանելու մէջ եւ շատ վարպետօրէն խուսաբեր է այդ զժողովութիւնը ներուն բաղխելէ : Ես այս առարկութիւնն ալ չզիտի ընէի (քանի որ ըսի թէ խնդիրը հոս բերողը ես չեմ) եւ տեղեկագրին եզրակացութիւնը պիտի ընդունէի եթէ անոր մէջ պարտաւելի նկատուած չ'ըլլար իմ գրութիւնս Պարոններն ալ քիչ պիտի ըլլար անշուշտ եթէ իմ գրութիւնն, Ս. Պատրիարքին հանդէպ իմ ըրած դիտողութիւնս իրողութեան վրայ հիմնուած չ'ըլլար : Իմ ոճս կրնայ խիստ ըլլալ, բայց ոչ երբէք պարտաւելի, քանի որ իրողութեան մը վրայ հիմնուած է ան եւ ոչ Նախաձեռնութեան զիւանք կրնար հերքել այդ իրողութիւնը եւ ոչ ալ իմ ոճիս գէ՛մ ըրողքիլ ուղղութիւնը : Ես պահ մը կ'ընդունիմ Նախաձեռնութեան զիւանքին հետ որ ես անխուս եւս ձեւին մէջ, բայց այդ պարագային այս ժողովը պիտի դանուի ճիշտ այն դժուարութեան առջեւ, որիկէ ուղած է խուսափիլ Նախաձեռնութեան զիւանքը : Եթէ ձեւին մէջ անխուս գտնուողը պարտաւելի քի արժանի պիտի նկատուի՝ ուրիմ պարտա անքնն աւելի ծանր բան մը պէտք է անոր՝ որ էութեան մէջ անխուս է : Այս պայմաններու մէջ ես հարկադրուած եմ պահանջել որ խնդրոյն էութիւնն ալ քննուի եւ եթէ հաստատուի որ իմ ըսածներս իրողութեան համապատասխան չեն, այն ատեն ժողովը ազատ է ոչ թէ միայն պարտաւելու եւ նոյն իսկ պատժելու զիս : Բայց որքան ատեն որ իրողութեան մասին խօսք չ'ըլլար, ես չեմ կրնար ընդունիլ Նախաձեռնութեան զիւանքին պարտաւելիքը, եւ չեմ կրնար հաւատալ որ այս պատկառելի ժողովը ալ պիտի կրնայ զայն ընդունիլ :

ԴԱԳ ԷՖ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍՆԱՆ. — Մեր տեղեկագրին վրայ քանի մը բացատրութիւն աւելցնել կարեւոր կը նկատեմ, որովհետեւ կը տեսնեմ որ էութեան եւ իրողութեան խնդիրներ կը յուզուին, մինչդեռ այդպիսի բաներ չկան : Ս. Պատրիարքը խնդիր մը կը յուզէր թէ երեսփոխան մը

երբ ժողովին մէջ իրաւունք ունի քննադատելու, կրնայ որիչ միջոցներով ալ արտայայտուիլ : Ես կը կարծեմ թէ մէկը երեսփոխանի պարտականութիւնը ստանձնած ըլլալուն համար, իր անհատական մասնաւոր իրաւունքներէն չզրկուի, բայց խնդիր է թէ քննադատելու իրաւունքը վայելող երեսփոխան մը, նոյն իրաւունքը կը վայելէ անարգելու համար եւս : Մեր զիւանք իր տեղեկագրին եզրակացութեան մէջ կ'ընդունի որ երեսփոխան մը անհատապէս խօսելու իրաւունքը վայելելով հանգեւրձ գուրան ալ իր կարծիքը ամէն միջոցով պաշտպանելու կարող է : Այս կէտին մեր տեղեկագրիլը իր լուծումը տալէ վերջ, որիչ կէտ մը կը շոշափէ եւ այն ալ լիզուի խնդիրն է, այս յօդուածը կրնայ ճիշտ պատճառով մը զրուած ըլլալ, այդ կէտը չենք քննած, բայց ինչ որ յայտնի է, այն է թէ Ս. Պատրիարքին նկատմամբ գործածուած այս լիզումն պատշաճ չէ : Ոսկայն մեր պաշտօնակիցը, որ մեր աշխատող անդամներէն մէկն է, կը հաւատանք թէ Ն. Սրբազանութիւնը անարգելու զիւանքով չէ գրած այդ յօդուածը, հետեւաբար անպատեհութիւն չկայ տեղեկագրին եզրակացութիւնը ընդունելուն մէջ : Ես մէկ բան մը միայն պիտի աւելցնեմ մեր տեղեկագրին վրայ. գոհունակութիւն կուզեմ յայտնել Ս. Պատրիարքին, որ իւր պաշտօնին պահանջած զիւրազգածութիւնը ունի, ինչ որ արժանիք մ'է, որովհետեւ մենք ունեցանք պատրիարքներ եւ տեղապահներ եւ ժողովներ որոնք հոս իրենց անձին նկատմամբ եղած անարգանքներուն իսկ համամար եղած անարգանքներուն իսկ հանդուրժեցին, առանց անդադարաւելու որ դուրսեցին, առանց նուիրական է, եւ անոր կոչայս պաշտօնը նուիրական է, եւ անոր կոչուած անձ մը միմիակ իրեն չի վերաբերիր :

Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐ. — Կը ներէք որ այսօր լիճաբանութեան առարկայ եղած խնդրոյն նկատմամբ նամակ գրած օրս, անխնայ չեմ հերկայ դանուիլ, պէտք եղած ձամբ չկրցի ներկայ դանուիլ, պէտք եղած լուսաբանութիւնը եւ բացատրութիւնը հաղորդելու համար : Այսօր միայն առիթ

կ'ունենամ բացատրելու միտքս : Ես այս խնդրոյն վրայ կը նայիմ միմիայն իրեն սկզբունքի խնդիր, որովհետեւ անձնական մասը ինձ համար կարեւորութիւն չունի : Իբր Զուէն եպիսկոպոս կրնամ քննադատուիլ եւ նոյն իսկ անարգելիլ, բայց քանի որ պաշտօն մը ունիմ որ իմս չէ այլ ազգին կը պատկանի՝ այս ժողովին կողմէ յանձնուած ըլլալով ինձ, այս պաշտօնին եւ աթոռին պատիւը պահելու համար պարտք կը ծանրանայ իմ վրաս նախաձեռնախնդրութիւն ցոյց տալու ինձի դէմ եղած անարգանքի մը համար :

Սովորութիւն չկայ որ Պատրիարք մը ինչէ հրապարակ, ինքզինք պաշտպանելու համար եւ այս կերպով ձեռքը սոքը կապուած կը մնայ իրեն դէմ եղած յարձակումներու հանդէպ ինքզինքը պաշտպանելու : Պատրիարքարանը մամուլի զիւանք ալ չունի, հրապարակային բացատրութեանց համար, ուրիմն այսպիսի պարագայի մը մէջ Պատրիարքը ինչ պէտք է ընէ, արդեօք իր գրաւած աթոռին արժանապատուութիւնը պաշտպանելու զգացում պէտք չէ՞ ունենայ. եթէ կուզէք որ այսպէս ըլլայ՝ տարբեր խնդիր է այդ : Անհատ մը իրեն դէմ եղած անարգանքի մը համար կրնայ դատարան դիմել, իսկ երբ ընդհանրութեան արժանապատուութիւնն է որ կը վնասուի՝ այն ատեն բան մը գործադրել կարելի չ'ըլլար : անա այս է որուն վրայ կը մտածեմ :

Ես այդ հարցումը բերի, որովհետեւ ազգին կը պատկանէր այն, եւ ոչ թէ անհատ մը, այլ երեսփոխան մ'է որ այդ հրապարակային քննադատութիւնը կ'ընէր, որուն ազգը յատկացուցած է իր ներկայացուցչական ամենէն բարձրաթոռներէն մին՝ իրաւունք տալով խօսելու եւ քննադատելու, արդ երբ անիկա չուզեր իրեն տրուած այդ առանձնաշնորհումէն օգտուիլ եւ տարբեր միջոցներու կը դիմէ որոնց դէմ դնելու ոչ մի միջոց ունիմ, երեսփոխանի մը վայել ընթացք է այս : Արդ, կը հարցնեմ ձեզ թէ՛ քանի որ ես իմ անձին չեմ պատկանիր, կա՞յ արդեօք ուր է միջոց անհիմն կամ սխալ ու եւ չ'անդա-

տու թեան պտտասխանելու, թէ ոչ պիտի հարկադրուի միւս միտու որ տեղի հաւանութիւն կը նշանակէ եւ ընդունած կ'ըլլամ այն ամէն յարձակումները որոնք կ'ըլլան ինձ դէմ: Այս պարագային մէջ պէտք կ'զգամ յայտարարելու որ իցիւ թէ ժողովը կարենա՞ր ստեղծել այդ միջոցը, որպէս զի Պատրիարքը կարենայ պաշտպանել ինքզինքն:

Ես այն համոզումը ունիմ որ այսպէս նստողները ազգին ներկայացուցիչներն են եւ ազգին նկարագիրը կը մարմնաւորեն, հետեւաբար այն որ կանարգէ այս ժողովէն ընտրուածը, կ'անարգէ այն անձները որ կընտրեն զինքը: Ես իբրեւ անհատ նկատուելով, անձիս դէմ ամէն որ ազատ է ուղղելու իր քննադատութիւնը, իսկ երբ իբրեւ Պատրիարք կը քննադատուիմ այն պիտի լեզուով մը որ Հպատակաճիւր ազգային ներկայացուցչական ժողովի անդամներու բարեկրթութեան, այս պարագային մէջ ինձի նետուած քարը կը հարուածէ նաեւ այս աթոռը: Երբ մենք կ'անարգենք մեր իշխանութիւնը, բնական է թէ օտարներն ալ պէտք եղած յարգանքը չեն ընծայեր անոր, որովհետեւ զմեզ ներկայացնող մարմինը նախ մենք պէտք է յարգենք, որպէս զի իրաւունք ունենանք օտարներէն յարգանք սպասելու թէ մեր պետին եւ թէ մեզի հանդէպ: Եթէ դուրսէն եկած օտար յարձակման մը դէմ ինքզինքս Հպատակաճիւր, կարծեմ անարժան կ'ըլլամ այս աթոռին եւ ազգը անմիջապէս վար պէտք է առնէ զիս իրաւամբ, իսկ երբ հարուածը մեր մէջէն է, այդ պարագային անշուշտ ազգային ժողովին կը մնայ պաշտպանել իր ընտրած Պատրիարքին զիրքը: Այս է անհաւաստի խնդիրը ուր թէ ոչ ես ո եւ է անձի հետ խնդիր չունիմ, իմ նպատակս այս պաշտօնը եւ աթոռը պատկառելի ընծայել է ու այդ նպատակաւ իբրեւ ազգային արժանապատուութեան խնդիր, պարտք համարեցի ինձ քանի մը խօսքով այս բացատրութիւնը տալ Պատ. ժողովիդ:

ՏՕԲԹ. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ. — Ես տեղեկագրին եզրակացութեան համամիտ եմ եւ

անպատշաճ կը նկատեմ քննադատութեան համար գործածուած ոճը, սակայն չեմ կրնար ընդունիլ որ այսպիսի երկրորդական խնդիր մը, մինչեւ պատրիարքական հրաժարական առաջ բերելու չափ կարենաթիւն ստանայ: . . .

ՆԵՐՍԷՍ ԷՖ. ՕԶԱՆԵԱՆ. — (Ընդմիջելով) Ո՞վ ըսաւ որ հրաժարականի խնդիր կայ, այդպիսի բան չկայ:

ՏՕԲԹ. Ս. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ. — (Շարունակելով) Ըստ իս հրաժարականի խօսք պէտք է ըլլայ այն տեղին, երբ ազգային ամենակենսական խնդիր մը կայ մէջտեղ, ապա թէ ոչ սահմանադրական այս աթոռ փչոտ է եւ ընտանաբար պէտք է ազգուիլ փոքր փուշերէ, այլ պէտք է պահել միւր ընկելը աւելի մեծ փուշերու:

Հ. ԷՖ. ԽՈՍՐՈՎԵԱՆ. — Ս. Պատրիարքը նշանակալից յայտարարութիւն մը ըրաւ այս ժողովին մէջ. ուզեց հասկնալ թէ օրէնսդիր իշխանութեան պետը երբ ո եւ է քննադատութեան առարկայ կ'ըլլայ, իրաւունք ունի՞ պատասխանելու: Այս հարցումը առիթ տուաւ յուզումնալից վիճարկութեան, սակայն ըստ իս խրնդիրը այսքան երկարելու պէտք չկայ, քանի որ արդէն Սայապալեան ԷՖ. ի յայտարարութիւններէն հոսկեցուեցաւ որ ինք ո եւ է անարգանք ընելու նպատակ չունի եւ այդպիսի ընթացք մը ամենուս համար, սկսելով նոյն իսկ Սայապալեան ԷՖ.էն, ներքի Հպիտի ըլլար: Քանի որ այսպէս է հետեւաբար առաջարկուած պարտանքը ընդունելու պէտք չմնար, եւ մանաւանդ որ Ս. Պատրիարքը ինքն ալ կ'ըսէ թէ անհնական խնդիր չէ իր յարուցածը, Արդէն ազգը իր գործադիր իշխանութեան պետէն կ'սպասէ այնպիսի ընթացք մը, որ գործնական հերքումը ըլլայ իրեն դէմ եղած քննադատութիւններուն:

Հ. ԷՖ. ԽՈՍՐՈՎԵԱՆ. — Ս. Պատրիարքի նոր բացատրութիւնները գոհունաւ

կութեամբ լսեցի, բայց մէկ կէտէն: Ս. Պատրիարքը կ'ըսէ թէ անհնական անարգանքի մը պիտի հանդուրժէի, սակայն պատրիարքական իշխանութեան դէմ եղած անարգանքի մը չեմ հանդուրժեր. ես այս բացատրութիւնը շատ ճիշտ չեմ գտնել եւ ընդհանրապէս կը խորհիմ որ հանրային պաշտօնի մէջ գունդերը միշտ կրնան քննադատութեան ենթարկուիլ եւ պէտք է որ հանդուրժեն այդ քննադատութիւններուն, սակայն պէտք չէ գոհնել իրենց անհնական արժանապատուութիւնը: Այսու հանդերձ պատրիարքական աթոռին արժանապատուութիւնը պաշտպանելու համար Ս. Պատրիարքին ցոյց տուած նախանձախնդրութիւնը պէտք է գնահատել, վասն զի անիկայ այս ժողովին արժանապատուութիւնը պահպանելու կը ծառայէ: Մենք տեսնք որ բռնի ու զատապարտելի միջոցներով այս ժողովին հաւաքականութեան դէմ անարգանքներ եղան եւ նախագահները խօսք մը իսկ չըսին, բաւ մը իսկ Հարապալեանի ժողովին եւ ազգին պատիւը պահպանելու համար: Այս տեսակէտով ես կ'ընդունիմ Նախաձեռնութեան զի անի տեղեկագիրը իր ամբողջութեամբ եւ որովհետեւ պատշաճից լեզուն պայման է, հետեւաբար առանց այդ կէտը նկատողութեան առնելու եղած հրաժարականութիւններու մասին պարտաւ ալ կրնայ ըլլալ:

ԶԱՅՆԵՐ. — Փակում փակում:

ԱՏԵՆ. ԷՖ. — Թեր ու դէմ եղած խօսքերը բաւական համարելով, վիճարկութեան փակումը քուէի կը դնեմ:

Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԷՖ. — Օրինական դիտողութիւն մը ունիմ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Չեմ կրնար խօսք տալ, որովհետեւ վիճարկութեան փակումը կը պահանջուի զանազան կողմերէ:

Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԷՖ. — Ես օրինական դիտողութիւն մը պիտի ընեմ, խնդրոյն վրայ Հպիտի խօսիմ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Քուէարկութեան պահուն ո եւ է խօսք չկրնար լսուիլ:

(Ատենապետ ԷՖ. վիճարկութեան փակումը քուէի դնելով, մեծամասնութեամբ ընդունուեցաւ:)

ԱՏԵՆ. ԷՖ. — Այլ եւս ո եւ է խօսք չեմ կրնար տալ ոչ մէկուն, միայն Սայապալեան ԷՖ. խօսք ուզած է իր անձին վերաբերեալ խնդրոյ մը համար՝ պարտաւոր եմ վերջին խօսքը անոր տալու:

Ս. ՊԱՏՐԻԱՐԷ ԶԱՅՐ. — Ես չեմ ընդունիր որ անհնական խնդիր մը գոյութիւն ունեցած ըլլայ, ինչպէս ըսի, ես ոչ զոք ամբաստանած եմ ոչ ալ պահանջած որ պատիժ անօրինուի, հետեւաբար ես համամիտ չեմ որ իբր ամբաստանեալ խօսքը իրեն տրուի:

ԶԱՅՆԵՐ. — Խօսք կուղենք, պէտք է թոյլ տաք խօսելու:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ոչ ոքի չեմ կրնար խօսք տալ, վիճարկութիւնը փակուած է եւ որպէս զի բանաձեւ մը պատրաստուի, տասը վայրկեանի դադար կուտամ:

(Դադարէն յետոյ տեղանք վերաբացուեցաւ ատենապետութեամբ ԽՈՏԱՍԱՐԵԱՆ ԷՖ. ի)

ԱՏԵՆ. ԷՖ. — Նախ եւ առաջ կը հրաւիրեմ զՁեզ որ պահէք ձեր պաշարքները իշխանութիւնը, որպէս զի ժողովին շարունակութիւնը գիտարկութեան չհանդիպի, հակառակ պարագային պիտի ստիպուիմ ատենանք փակել: Ուրիշ ո եւ է խօսք չեմ կրնար տալ, միայն Սայապալեան ԷՖ. ին վերջին խօսքը կուտամ որովհետեւ իր ըսելիքը մասնաւոր կերպով կը շահագրգռուէ ժողովս եւ իր գրածը արդարացնելու համար է որ պիտի խօսի:

Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԷՖ. — Չէք կրնար փակել, օրինական դիտողութիւն ունիմ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ժողովը իր ներքին կանոններուն մէջ պատժական տնօրինութիւններ ունի, ձեր մասին պիտի օտարաբան զործադրել, եթէ այսպէս չարունակէք:

ԺԱԳ. ԷՖ. ՍՍՅԱՊԱԼԵԱՆ. — Նախաձեռնութեան զիւանի կողմէ կղած յայտարարութեան մէջ ըսուեցաւ թէ իրենք խնդրոյն էութեան մէջ մանկու պէտք չունենին, մինչդեռ ըստ իս պէտք էր որ այդ քննութիւնը տեղի ունենար, բայց Ս. Պատրիարքը կ'ըսէ թէ ինք անձնական ու եւ ինչոր չունին, ես ալ չունիմ արդէն եւ այդ յօդուածը գրած եմ ոչ թէ անարգելու ալ ըննադատելու համար միայն:

Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ԶԱՅՐ. — Այս խնդրը կրնայ փակուած նկատուիլ, բանի որ Սայապալեան էֆ. կ'ըսէ թէ անարգելութեան որով ինչ չունենանք, թերեւս իր գրելու և խօսելու ոճը այդ է. ես կը ներում իրեն եւ խնդրը փակուած կը նկատեմ, առանց պէտք տեսնելու որ նախաձեռնութեան զիւանի եղբակացութիւնը վէճի նիւթ ըլլայ ժողովի մէջ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Դիւանիս վրայ երեք բանաձեւեր կան պիտի կարգացունին հետզհետէ:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ բանաձեւերը.)

Ժողովս համամիտ գտնուելով Նախաձեռնութեան զիւանի տեղեկագրի առաջին մասին եւ Ս. Պատրիարք Հօր յայտարարութեան հիման վրայ փակեալ նկատելով խնդրը, կ'անցնի իր օրակարգին:

Բնորոշելով թէ անբռնաբարելի է երեսփոխանի մը քննադատելու իրաւունքը եւ թէ տուեալ պարագային՝ Պ. Սայապալեան նպատակ ունեցած է անարգելու Ս. Պատրիարքը, ժողովը կ'անցնի իր օրակարգին:

Ա. Յ. Կասպարեան

Բնորոշելով թէ անբռնաբարելի է երեսփոխանի մը քննադատելու իրաւունքը եւ թէ տուեալ պարագային՝ Պ. Սայապալեան նպատակ ունեցած է անարգելու Ս. Պատրիարքը, ժողովը կ'անցնի իր օրակարգին:

Ա. Վաւառեան

Ժողովս լսելով Նախաձեռնութեան զիւանի եղբակացութիւնը կ'ընդունի զայն, բայց նկատելով թէ Ս. Պատրիարք Հայրը հայրաբար ներքից, ժողովս ալ կ'ընդունի Ս. Պատրիարք Հօր յայտարարած ներումը եւ խնդրը կը փակէ:

Հ. Արամեանց Մ. Նարանեան

(Ատենադպիր էֆ. առանձին առանձին քուէի դնելով այդ բանաձեւերը 10 քուէ ստացաւ Նախաձեռնութեան եւ Ս. Պատրիարք Հօր ներումը բանաձեւը, իսկ Վաւառեան եւ Գասպարեան էֆ. ինքեւ բանաձեւերը միացան հետեւեալ կերպով.)

Ժողովս համամիտ գտնուելով Նախաձեռնութեան զիւանի տեղեկագրին առաջին մասին եւ Ս. Պատրիարք Հօր յայտարարութեան հիման վրայ փակեալ նկատելով խնդրը, կ'անցնի իր օրակարգին:

(Սոյն բանաձեւը ընդունուեցաւ 15 քուէով եւ առեանը փակուեցաւ ժամը 5¹/₂ին)

Ատենադպիր Ատենադպիր
Յ. Աւետիսեան Հ. Պոյանեան

(Դ. Վիճակ)

Գում գարու, Գումգարուի դուրս

- 69. Դաւիթ Էֆէնտի Տէր-Մովսէսեան
- 70. Համբարձում » Պոյանեան
- 71. Սարգիս » Սուրի
- 72.

Կէտիկ փաշա

- 73. Հմայեակ Էֆէնտի Արամեանց
- 74. Յարութիւն » Ճանկիւլեան
- 75. Յակոբ » Աւետիսեան
- 76. Յակոբ » Նշանեան
- 77. Ներսէս » Զաքարեան

Սամաթիա Ս. Գէորգ

- 78. Գրիգոր Էֆէնտի Զօհրապ
- 79. Լեւոն » Սամսեան
- 80. Հայկ » Խօնասարեան
- 81. Պարգև » Փափագեան
- 82. Լեւոն » Սեդրոսեան
- 83. Ռուբէն » Փափագեան
- 84.

(Ե. Վիճակ)

Գումգարուի-Խճառի

- 85. Երուանդ Էֆէնտի Խորասան
- 86. Լեւոն » Տէմիրճիպաշեան
- 87. Ռուբէն » Զարգարեան
- 88. Ռսկան » Մարտիկեան
- 89. Կոպեռնիկ » Խաչատուրեան

Թով-գարու

- 90. Գէորգ Էֆէնտի Սիմէնեան
- 91. Երուանդ Էֆէնտի Օտեան

Նաուր-գարու

- 92. Նշան Էֆէնտի Գալսեան
- 93. Տիգրան » Դանուկեան

Սամաթիա Ալթիմէրմէր

- 94. Պետրոս Էֆէնտի Գալսեան
- 95. Բարսեղ Էֆէնտի Աւետիսեան
- 96. Գարեգին » Տէմիրճիպաշեան
- 97. Յարութիւն » Շահրէկեան
- 98. Վարդգէս » Սէրէնկիւլեան
- 99. Յակոբ » Միսասեան

Բումէլի-ճիսար, Պոյան-գիւղ, Ենի-գիւղ

- 100. Արթուր Էֆէնտի Տէր Յակոբեան

ԳԱԻԱՌԱՅԻՆ ՆԵՐՄՓՈՒՅԱՆՔ

(Ա. Վիճակ)

Եգիպտոս

- 101. Վահան Էֆէնտի Թէքեան
- 102. Յակոբ Էֆէնտի Պօնոգեան
- 103. Տօքթ. Փաշայեան Էֆէնտի
- 104. Սողոմոն Էֆէնտի Տէր-Ազարեան
- 015. Արամ Էֆէնտի Անտոնեան

Մուշ

- 106. Գեղամ Էֆէնտի Տէր-Կարապետեան

Տրապիզոն

- 108. ՕՏիկ Էֆէնտի Զիֆէլ-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղթամար

- 109. Ա. Վաւառեան Էֆէնտի
- 110. Գառն Էֆէնտի Շիրինեան
- 111. Աւետիս Էֆէնտի Ճինկիւլեան
- 112. Վահան Էֆէնտի Էսաեան
- 113. Սարգիս Էֆէնտի Գնաճեան
- 114.

Պաղտատ

- 115. Տօքթ. Ներսէս Էֆէնտի Թիւեան
- 116. Սերովք Էֆէնտի Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ալն

- 117. Ատովմ Էֆէնտի Երեցեան
- 118. Արթուր Էֆէնտի Սարաֆեան
- 119. Սեպուհ պէյ Իսթիսեան
- 120. Լեւոն Էֆէնտի Տնտեսեան
- 121. Տէվլէմ Էֆէնտի Տատրեան

- 122. Պանտրմա-Պարթեպիր
- 123. Տիրան Էֆէնտի Երկանեան
- 124.

(Դ. Վիճակ)

Ադրիանուպոլիս

- 125.
- 126. Արիստակէս Էֆէնտի Գասպարեան
- 127. Աղեքանդր Էֆէնտի Փանոսեան
- 128. Զարեհ Էֆէնտի Խորասանեան

- Պրուսա**
129. Գասպար Էֆենտի Նեմցե
Ռոտտսթո
130. Միհրդատ Էֆենտի Հայկազն
Տիգրանակերտ
131. Տիգրան Էֆենտի Նազաշեան
Տիվրիկ
132.
(Ե. Վինակ)
Ամասիա—Մարզուան
132. Տիգրան Էֆենտի Մարտիկեան
Բարերդ
134. Յարոմիւն Էֆենտի Գարրինեան

- Գաղատիա**
135. Յր. Խաչիկ Էֆենտի Պօլոսեան
Գոնեա
136. Բարժուկ Էֆենտի Զօրեան
Երզնկա
137. Գարրիէլ Էֆենտի Նորատունկեան
Մարաշ—Ջէյթուն
138. Սմբատ Էֆենտի Բիւրատ
Շապին—Գարահիսար
139. Ժագ Էֆենտի Սալազալեան
Ասրատիա
140. Տօրմ. Նազարէթ Էֆենտի Տաղատրեան

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

- | | |
|-----------------------------------|----------------------------------|
| Գարրիէլ Էֆ. Նորատունկեան Ա. Ատեն. | Յակոբ Էֆենտի Աւետիսեան Ա. Ատեղպ. |
| Հայկ « Խօճապարեան Բ. « | Արամ « Անտոնեան Բ. « |
| Համբարձում Էֆ. Պօյաճեան Գ. « | Դէդրգ « Սիմֆէշեան Գ. « |

ԶԵՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Տ. Հմայեակ Արքե. Գիմաքսեան Ատենա.
Ներսէս Էֆենտի Օհանեան
Տոք. Ստեփան « Թէրզեան

ԴԱՍՏԻՐԱՅԻՆԻԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Հմայեակ Էֆենտի Արամեանց
Մարկոս « Նաթանեան
Աստուածատուր Էֆենտի Խաչատրեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Արիստակէս Էֆենտի Գասպարեան
Եղուարդ « Շիրինեան
Տիգրան « Մանուէլեան

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

- Դէդրգ Էֆենտի Ասլանեան Ատենապետ
Յովհաննէս « Իսապուլեան
Սողոմոն « Տ. Ազարեան

ՅԱՐԱՅԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

- Պարգէլ Էֆենտի Փափազեան
Յարութիւն « Մոստիշեան
Տրդատ պէյ Տատեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Աղէքսանդր Էֆենտի Փանոսեան Ատեն.
Ռուբէն « Զարդարեան
Օննիկ « Զիֆթէսարաֆ

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Տ. Վահրամ Արքեպիս. Մանկունի Ատեն.
Յակոբ Էֆենտի Մինասեան
Տոք. Տէվլէթ « Տատրեան

ՆԱԽԱԶԵՈՒՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Դաւիթ Էֆենտի Տ. Մովսէսեան Ատեն.
Պետրոս « Խորասանեան
Ռուբէն « Փափազեան

ԵԼԵԻՄՏԻՅ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ

- Թորգոմ Էֆենտի Պօյաճեան Ատենա.
Միհրդատ « Հայկազն Մատակա.
Յարութիւն « ձանկիւլեան
Յարութիւն « Դարբինեան Ատեղպ.
Սարգիս « Պէհրէեան Գանձապ.

Գ Ի Ն 1 Ղ Ր ՈՒ Շ

Ան փոսկանութիւն Ազգ. Սնտուկին, Ազգ. Ժողովոյ ծախուց յատկացեալ
Կը ծախուի յազգային Խորհրդարան Ղալաքիոյ